Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ս. Ղևոնդյանց քահանաների տոնը: Այս առիթով հայոց հոգևոր կենտրոն էին եկել Հայաստանի և Արցախի թեմերի շուրջ 150 եկեղեցականներ՝ թեմակալ առաջնորդների գլխավորությամբ՝ միասնական աղոթքով և խոկումով նորոգելու իրենց ուխտը և հայտնելու իրենց հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Մակար աբեղա Հակոբյանը: Ս. Պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ հորդորելով ներկաներին նմանվել Ս. Ղևոնդ քահանային իբրև առ Աստված ապավինության, Եկեղեցու և ժողովրդի հանդեպ հավատարմության ու անմնացորդ նվիրումի կատարյալ տիպարի:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ քահանայական հավաք, որի քննարկման նյութն էր «Քահանան որպես միսիոներ» թեման: Հավաքը բացեց վերջինիս կազմակերպիչ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը՝ օրվա խորհրդի և ընտրված նյութի շուրջ իր խորհրդածությունները փոխանցելով ժողովականներին: Առաքելության և քարոզչության վերաբերյալ իրենց փորձառությանը հաղորդ դարձնելու նպատակով դասախոսություններով հանդես եկան Գուգարաց թեմի Տավուշի մարզում առաջնորդական փոխանորդ Տ. Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը, Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը և Կոտայքի թեմի հոգևոր սպասավոր Տ. Կյուրեղ քահանա Տալյանը: Բանախոսներն անդրադարձան հայ եկեղեցականի առաքելությանը, քրիստոնեական քարոզչության ու դաստիարակության անհրաժեշտությանը և իրականացման ոլորտներին, Եկեղեցու առջև ծառացած խնդիրներին, որոնց վերաբերյալ այնուհետև եղան նաև քննարկումներ:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց ողջ հոգևոր դասին՝ հորդորելով նոր եռանդով ու նախանձախնդրությամբ լծվել քարոզչական սրբազան գործին, որպեսզի կարողանան լուսավորել հայորդիների հավատքը, նրանց հաղորդ դարձնել եկեղեցական կյանքին, արժեքներին ու բարոյական սկզբունքներին: «Քահանան պիտի լինի այնտեղ, ուր հավատացյալն է, ուր խոսքի պահանջ կա»,- շեշտեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ կարևորելով ժողովրդի հոգևոր կրթության ու դաստի-

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР



ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ Է ԴԻՄՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՈՂ ՍՐԲԱԶԱՆԸ՝
Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆԸ

արակության իրագործման առաքելությունը և ժողովրդի հոգևոր կարիքների ու ակնկալիքների լիարժեք բավարարումը:

«Մենք վստահ ենք, որ այս հանդիպումները և նմանատիպ թեմաները, որ քննարկվում են այստեղ, մեծապես շահեկան և օգտակար են լինելու մեզանից յուրաքանչյուրի համար՝ ավելի հստակ տեսնելու մեր պատասխանատվության դաշտը, անդրադառնալու մեր պարտականություններին հավատացյալի, Հայ Եկեղեցու, մեր պատմության ու ապագայի առջև և նախանձախնդրորեն հետամուտ լինելու մեր առաքելության կատարմանը»,- ասաց Հայոց Հայրապետն իր խոսքում՝ կոչելով եկեղեցականներին իրենց անխոնջ ծառայությամբ, սիրով ու նվիրումով անկարելին հնարավոր դարձնել մեր կյանքից ներս:

Ս. Ղևոնդյանց տոնի առիթով, ի գնահատություն իրենց ծառայության, Ամենայն Հայոց Հայրապետի Սրբատառ Կոնդակով Հայաստանի և Արցախի թեմերից երկու քահանաներ արժանացան ավագ քահանայության և չորսը՝ ծաղկյա փիլոն կրելու պատվի, իսկ 24-ը լանջախաչ կրելու իրավունք ստացան:

Հավարտ հավաքի բոլոր եկեղեցականները Մայր Տաճարում մասնակցեցին երեկոյան ժամերգության:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՁԵՌԱՄԲ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊՍ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ ԵՐԵՔ ՆՈՐ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Փետրվարի 3-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Սուրբ Պատարագի ընթացքում Միքայել Սրբազանի ձեռամբ քահանայական ձեռնադրություն և օծում ստացան երեք սարկավագներ:

Ձեռնադրող Սրբազան Հայրն օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Անդրանիկ սրկ. Պողոսյանը վերակոչվեց Տ. Իսահակ քահանա, Վաչիկ սրկ. Զարգարյանը՝ Տ. Ռուբեն քահանա, իսկ Արմեն սրկ. Արսենյանը՝ Տ. Գարեգին քահանա:

«Դեպի Քրիստոս՝ Տերը տանող ճանապարհը նեղ է, և հետևաբար այս ճանապարհին նվիրագործված, նվիրաբերված անձնավորության ուղին չի կարող լինել առանց փշերի, առանց փորձությունների, հալածանքների ու նեղությունների: Մենք աղոթեցինք, որ Աստված իրենց բոլոր տեսակի փորձություններից հեռու պահի: Բայց փորձություններն այսպես թե այնպես լինելու են: Մենք աղոթեցինք նաև, որ իրենք կարողանան հաղթահարել բոլոր փորձությունները Քրիստոսի սիրո համար, Քրիստոսին նվիրվելու համար, մեր ժողովրդին ծառայելու համար, մեր Հայրենիքին նվիրվելու համար:

Եվ այսօր մեր երեք ընծայյալները ծունկի եկան Սուրբ Խորանի առաջ, ձեռքերը վեր պարզեցին և հրաժարվեցին աշխարհիկ հաճույքներից, սին պատրանքներից և ընտրեցին Քրիստոսին հետևելու ճանապարհը: Այո՛, հրաժարվեցին աշխարհիկ հաճույքներից, սակայն չհրաժարվեցին մեր սիրելի ժողովրդին ծառայելուց, մեր սիրելի Հայրենիքի համար, եթե պետք է, նահատակվելուց և մեր Եկեղեցու փառքը կերտելուց:

...Այսօր յուրաքանչյուր հոգևորական պարտավոր է պատրաստ լինել ցանկացած պահի, ցանկացած հորիզոնի տակ նահատակվել, իր կյանքը տալ հանուն Քրիստոսի, հանուն իր Եկեղեցու և ժողովրդի»,- նշեց ձեռնադրող Սրբազան Հայրն իր քարոզում՝ շնորհավորելով նորընծաներին և հորդորելով քահանայական պատիվը բարձր պահել, լինել մշակներ, որոնք ամաչելու պատճառ չունենան, հերկել այն հողը, որ իրենց է վերապահված լինելու, և վայելել նաև հնձելու բերկրանքը, ունենալ բազմաթիվ հետևորդներ Քրիստոսի այգու մեջ և լինել իմաստուն տնտեսներ: Սրբազան Հայրը մաղթեց նորընծա քահանաներին՝ լինել արժանի սպասավորներ, հնազանդ զավակներ Մայր Աթոռի և ժուժկալության քարոզիչներ աշխարհի բոլոր ծագերում:

Վարդանանց տոնին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում նշվում է նաև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով Ս. Պատարագի ավարտին ողջ միաբանության մասնակցությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության համար:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, Միքայել Սրբազանը կատարեց նաև վեղարի տվչության արարողությունը: Տեր Իսահակը և Տեր Ռուբենը, որպես կուսակրոն քահանաներ, ստացան վեղար և համալրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ